

ՄԻԿՐՈՏԱՐՐԵՐ

Oligo Iron-DTPA 6% Liquid



Van Iperen Oligo Iron-DTPA 6% Liquid-ը մաքուր, երկաթի բարձր խտությամբ հեղուկ պարարտանյութ է և չի պարունակում նատրիում: Iron DTPA-ը խորհուրդ է տրվում կիրառել հիդրոպոնիկ մշակության դեպքում: Պարարտանյութն իրենից ներկայացնում է կայուն, կիսաթափանցիկ լուծույթ, որը կարելի է կիրառել բույսի աճի տարբեր ֆենոլոգիական փուլերում: Երկաթի բարձր պարունակությունը նպաստում է քլորոֆիլի արտադրությանը:



Բաղադրություն (%w/w)

Երկաթ 6%

Համատեղելիություն

Համատեղելի է այլ պարարտանյութերի հետ: Բաքի լուծույթի pH-ը պետք է լինի 4-ից բարձր:

Փաթեթավորում



- Նպաստում է տերևային զանգվածի աճին, կանխարգելում է քլորոզը
- Երկաթը 100% խելատացված է և ամբողջությամբ հասանելի է մինչև pH-ի 7 արժեքը
- Հեշտ է կիրառության համար
- Կիրառվում է հիդրոպոնիկ եղանակով մշակության դեպքում
- Դրենաժային ջուրը խորհուրդ է տրվում օգտագործել ուլտրամանուշակագույն ճառագայթներով ստերիլիզացնելուց հետո

Առանձնահատկություններ

- Մաքուր լուծույթ, բարձր խտություն
- Արտոնագրված միկրոգրանուլացման գործընթաց
- Թափանցիկ դեղին հեղուկ

Ծախսի նորմա հիդրոպոնիկ մշակություն

1.000 լիտր հիմնական լուծույթում	Երկաթ/ գրամ	Երկաթ/ մմոլ
1.0 լ	76	1.36
5.0 լ	380	6.80
10.0 լ	760	13.61
15.0 լ	1140	20.41

Նշված կոնցենտրացիաները ցույց են տալիս սննդատարրերի չափաքանակը հիմնական լուծույթում: Ոռոգման ջրում վերջնական կոնցենտրացիան կախված է հիմնական լուծույթում սննդատարրերի քանակից, ոռոգման ջրի հարաբերակցությունից և ջրում եղած սննդատարրերի քանակից:

Նշված քանակները, ծախսի նորմաները և կիրառման փուլերը ներկայացված են որպես ցուցում: Հստակ ծախսի նորմաները, չափաքանակները և կիրառման փուլերը կախված են տեղի պայմաններից, այլ պարարտանյութերի կիրառումից և կարող են ներկայացվել միայն ճշգրիտ ուսումնասիրությունից հետո:

Գիտնք արդյոք

Van Iperen-ն առաջարկում է լուծվող և հեղուկ EDTA խելատացված միկրոտարրերի լայն տեսականի: EDTA տեսականին ներառում է մեկ միկրոտարրից բաղկացած պարարտանյութեր և մի քանի միկրոտարրերից բաղկացած պարարտանյութեր (խառնուրդներ և կոմպլեքսներ): IDHA, DTPA, EDDHA և HBED խելատացված միկրոտարրերից բացի Van Iperen-ն առաջարկում է բաց գրունտում և ջերմոցներում տերևային սնուցմամբ և ոռոգմամբ կիրառելի պարարտանյութեր: Van Iperen-ի EDTA պարարտանյութերը «Բպերեն մասնագիտացված պարարտանյութերի» մի մասն են կազմում:

Ծախսի նորմայի այլ հրահանգներ

Տերևային սնուցման դեպքում պետք է ընտրել EDTA-ի և IDHA-ի միջև: EDTA-ը կարող է օգտագործվել նաև բաց գրունտում ոռոգման դեպքում, եթե հողի pH-ը 6-ից բարձր է: Բաց գրունտում ոռոգման դեպքում, եթե ալկալինային հող է, պետք է ընտրել EDDHA-ի և HBED-ի միջև: Ժամանակակից ջերմաստիճանում հիդրոպոնիկ մշակության դեպքում լավագույն տարբերակը DTPA-ն է:

“ԱԳՐՈՏԵԽ” ընկերությունը ջերմաստիճանային, ֆերմերներին և բուսաբուծական արտադրությունում ներգրավված այլ անձանց մատակարարում է բույսերի մշակության համար բարձրորակ ապրանքներ, ինչպես նաև այդ բնագավառում տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն:

www.agrotech.am

Van Iperen International հոլանդական ընկերությունն իր գործունեությունը ծավալում է ողջ աշխարհում՝ արտադրելով և մատակարարելով ամենատարբեր մասնագիտացված պարարտանյութեր:

www.vaniperen.com